Կարգապահական գործ թիվ ԿԳ-19057

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի մայիսի 29-ի թիվ 114-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/71-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՌԱ ԿԱԿՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ Սեդրակ Ասատրյանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի կազմով

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Նառա Կակոյանին (արտոնագիր՝ թիվ 449) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքի՝ փաստաբան Նառա Կակոյանն ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով 2018 թվականի հունիսից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

11.03.2019թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 107-Ա/ԿԳ-19057 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Նառա Կակոյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 15.03.2019թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 29.05.2019թ., ժամը՝ 19:38-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբան Նառա Կակոյանը բացատրություն չի ներկայացրել:

Փաստաբանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Նառա Կակոյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.06.2005թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 29.05.2019թ. տրամադրված տեղեկանքով),
2) փաստաբան Նառա Կակոյանն ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով 2018 թվականի հունիսից 2019թ. հունվար (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար համար անդամավճարի մուծման չկատարման պարտավորություն (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով),
3) փաստաբան Նառա Կակոյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 29.05.2019թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Նառա Կակոյանի (արտոնագիր՝ 449, ստացված՝ 24.06.2005թ.) նկատմամբ 2013-2019թթ. ընկած ժամանակահատվածում 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (չհաշված սույն կարգապահական վարույթը):

Խորհրդի 28.09.2015թ. թիվ ԿԳ/114-Ա և 16.10.2015թ. թիվ ԿԳ/149-Ա. որոշումներով Նառա Կակոյանը ենթարկվել է կարգապահական տույժերի՝ համապատասխանաբար, նկատողության և խիստ նկատողության անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար, և տույժերը մարվել են:

Խորհրդի 03.03.2016թ. թիվ ԿԳ/53-Ա, 11.08.2018թ. թիվ ԿԳ/159-Ա և 17.12.2018թ. թիվ ԿԳ/214-Ա որոշումներով Նառա Կակոյանը ենթարկվել է կարգապահական տույժերի՝ համապատասխանաբար. տուգանքի՝ 10.000 ՀՀ դրամի չափով, տուգանքի՝ 15.000 ՀՀ դրամի չափով և տուգանքի՝ 20.000 ՀՀ դրամի չափով, և տույժերը չեն մարվել:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Նառա Կակոյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի **(այսուհետ նաև՝ Կարգ)** 7-րդ կետի՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Նառա Կակոյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 06.03.2019թ. տրամադրված տեղեկանքով: Ավելին՝ կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր:

Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժերի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, Կարգի 21-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Տ՝

1. Փաստաբան Նառա Կակոյանին (արտոնագիր՝ թիվ 449) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Նառա Կակոյանի (արտոնագիր թիվ 449) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 25.000 ՀՀ դրամի չափով:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Նառա Կակոյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան

29 մայիսի 2019թ.
թիվ ԿԳ/71-Ա
ք. Երևան